

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի նիստի՝ կայացած 26.05.2016թ., թիվ 5 արձանագրությունից:

Նիստին գիտխորհրդի 40 անդամներից մասնակցում էին 34-ը, հարգելի պատճառով բացակայում էին 6 -ը:

ԼՄԵՑԻՆ - 1.Մարդկային ռեսուրսների կառավարման աուդիտ. հետադարձ կապի մշտադիտարկման արդյունքները:

Զեկ.՝ կրթության որակի ապահովման

կենտրոնի ղեկավար Մ.Շահվերդյան

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ. կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- ✓ Ընդունել ի գիտություն և առաջարկել համալսարանի *կառավարման մարմիններին* վերանայել կադրերի բաժնի, հաշվապահության և կարիերայի կենտրոնի կառուցվածքային փոփոխության խնդիրը:
- ✓ Գիտխորհրդին. լսել վերոնշյալ բաժինների հաշվետվությունը ըստ ներկայացված բարելավման պլանների և հետադարձ կապի մեխանիզմների ներկայացմամբ:

Հանձնարարել.

1. *կադրերի բաժնին* մինչև հուլիսի 1-ը ներկայացնել այս տարվա ընթացքում իրականացված այն աշխատանքները, որոնք կարող են տանել մարդկային ռեսուրսների հավաքագրման, պահպանման և զարգացման քաղաքականության կատարելագործմանը:
2. *հաշվապահության* բաժնին ներկայացնել հաշվետվություն այն մասին, թե ինչպես են իրականացվում իր՝ բաժնի առջև դրված խնդիրները:
3. *կարիերայի կենտրոնին* մինչև հուլիսի 1-ը ներկայացնել այս տարվա ընթացքում իրականացված այն աշխատանքները, որոնք արտահայտում են ուսանողների և շրջանավարտների կարիերայի աճին նպաստող աշխատանքները (այլ ոչ թե

մարքեթինգի տվյալները): Ներկայացնել կարիերայի կենտրոնի հավակնությունները մոտակա տարիների կտրվածքով:

4. *Շարունակական կրթության* կենտրոնին. ուսումնասիրել ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական վերապատրաստման կարիքները, վերհանել խնդիրները և ներկայացնել այն լուծման ուղիները:

Նիստի նախագահ՝

Գ. Խաչատրյան

Իսկականի հետ ճիշտ է.

Գիտքարտուղար՝

Ս. Բեժանյան